

ապէք ինձանից երկուսդ էլ, և թողէք ինձ մե-
նակ, եթէ դուք էլ էք դողում... Ես սպասում
եմ նրան...

Բելլանժերը.— Գոյր, ես չը գիտեմ, ինչ պէտք
է անել, բայց մնում եմ քեզ հետ...

Ազլովարը.— Ես էլ նոյնպէս, աղջիկս... Ար-
դէն վաղուց հոգիս անհանգիստ է... Դուք կը
փորձէք... Մենք շատ անգամ ենք փորձել...

Իգրէնը.— Դուք փորձել էք... դուք էլ:

Ազլովարը.— Նրանք բոլորն էլ փորձել են...
Բայց վերջին ակնթարթին ամենքն էլ կորցրել
են ոյժերը... Ինքերդ կը տեսնէք... Նա կը հրա-
մայէ ինձ՝ գալ իր մօտ հէնց այսօր երիկոյանս.
Ես լուռ կը ծալեմ ձեռքերս պատասխանի տեղ,
և իմ յոգնած ոտքերը կը բարձրանան սանդուխք-
ներով առանց դանդաղելու և առանց շտապելու,
չը նայած որ ես գիտեմ՝ այնտեղից անկարելի
է իջնել բաց աչքերով... Նրա առջ ես կորցնում
եմ արիւթիւնս... Մեր ձեռքերը ոչ մի բանի
չեն ծառայում և ոչ ոքի չեն հասնում... Այստեղ
ուրիշ տեսակ ձեռքեր են պէտք, և սրա համար
իդուր է ամեն բան... Բայց եթէ դուք յուսով
էք, ես ուզում եմ օգնել ձեզ... Փակեցէք դռնե-
րը, դաւակ... Զարթեցրէք Տենտաթիլին. զրկե-
ցէք նրան ձեզ մերկացրած ձեռքերով և առէք
ծնկերիդ վրայ... ուրիշ պաշտպանութիւն չունենք
մենք...

(Գը շարունակուի)

ՍԻՄ. ԲԱՔԻՆԱՆ

ՏՈՒՆԻ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱԿՈՆ

Ո՛րքան էլ դարեր անցնին ու երթան
Սուզուելով մտայլ անդունդն անցիալի,
Տառերը Հայոց չքնաղ, անման
Պէտք է առկայծեն իբրև հայելի

Հայի խինդն ու վիշտ
Յարատև ու միշտ:

Բնութեան դարում, մինչ բաժան-բաժան
Հայը հալածուած տարտամ ու երեր
Հեծում էր, —անա փրկութեան մի ձայն,
Լոյս մաքի ծնունդ՝ արուեցան տառեր
Եւ աւետարան՝
Ցաւերի դարման:

Մտայլ գիշերին տիրեց արեգակ.
Հայը երկպառակ, թոյլ ու յուսահատ

Տառերով զինուած կազմեց իր բանակ.
Իէպի թշնամին զիմեց անվհատ

Կուռելու համար,
Մեռնելու համար:

Ընկան, կոխուեցան մեր թոյլ մարմիններ,
Բայց մեր հոգիներն ազատ մնացին.

Նրանց փրկեցին Մաշտոցեան տառեր,
Կենսատու տառեր, չքնաղ, յուսածին,

Արևի նման
Պայծառ, անմահ:

Երեսուն և վեց անյաղթ զինւորներ
Հայութեան տուին կեանքի յաղթանակ.

Երեսուն և վեց անմեկին տառեր—

Մաշտոցեան մաքին անթառամ պսակ
Զքնաղ խոհերի,
Վեհապանծ անզրի:

Ու դարեր անցան, դարեր զնացին,
Սուզուելով մտայլ անդունդն անցիալի.

Տառերը հայոց խօսուն, անմեկին

Դեռ առկայծում են իբրև հայելի

Հայի խինդն ու վիշտ
Յարատև ու միշտ:

ՅՈՎ. ՀԱԶՐ-ԲԷԳԵԱՆ

* * *

Տաճկաստանի ամէն կողմէն

Ծանր լուրեր կը լսուի,

Օգուտ չկայ Եւրոպայէն—

Հայի արիւն կը վոթուի:

Հանա Յոյսը ծոյլ Տաճիկին

Միսն ու մորթին կը քերթէ,

Անոր տեղը՝ պիղծ Օսմանլին

Մեր խեղճ Հային կը մօրթէ:

Զէնակոտիան մէյտան հանից

Պատերազմի Տաճիկին,

Սէնպ, Պոլկառին խօսքի բերից—

Կաննէ հայհայ Սըութառին:

Պատերազմը նոր մահանա՝

էքէ կանուուն հայերէն.

Պաղէշ ու Վան արիւնլուա—

Տիւլէք չիբա Տաճիկէն: